




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«6» մարտի 2017թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետի տեղակալ  Հ. Այունց

ԳԲԽ-24/17 բողոքը քննող

Հանձնաժողովին

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «ԷՔՍԻՏՈ» ՍՊԸ-ի 17.02.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «ԷՔՍԻՏՈ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«ԷՔՍԻՏՈ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 17.02.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Երևանի թիվ 12 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «12ՀԴՊ-ՇՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի մասնակից «Գալիմա» ՍՊԸ-ն, չհանդիսանալով ԱԱՀ վճարող, հայտի հավելված 4 գնային առաջարկը ներկայացրել է ԱԱՀ-ով, ներքևի մասում նշելով, որ այս պահին չի հանդիսանում ԱԱՀ վճարող և հավաստում, որ «Գալիմա» ՍՊԸ-ի կողմից սույն գործարքի գծով ՀՀ պետական բյուջե կվճարի ավելացված արժեքի հարկ:

Ըստ Ընկերության՝ «Գալիմա» ՍՊԸ-ն ձևախեղել է գնումների մասին ՀՀ օրենքը, քանի որ հենց այդ նույն մասում հրավերով սահմանված է, որ, եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով ՀՀ պետական բյուջե վճարվելիք ԱԱՀ-ի գումարը նշվում է գնային առաջարկի 5-րդ սյունակում:

«ԷՔՍԻՏՈ» ՍՊԸ-ն որպես բողոքի իրավական հիմք նշել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասը, 45-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետը, 49-րդ կետը:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է կասեցնել «12ՀԴՊ-ՇՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը, չեղյալ համարել «12ՀԴՊ-ՇՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.02.2017թ. թիվ 6 և 13.02.2017թ. թիվ 7 արձանագրությունները:

Ընկերությունը, մասնակցելով 23.02.2017թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած ԳԲԽ-24/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, ներկայացրել է ի լրումն բողոքի, որով հայտնել է, որ «Գալիմա» ՍՊԸ-ի հայտը ենթակա է մերժման՝ հրավերի հավելված 4-ը սխալ կազմված լինելու հիմքով:

2. «Երևանի N 12 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

«Երևանի թիվ 12 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 02.03.2017թ. թիվ 12/252 գրությամբ «ԷՔՍԻՏՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ Ընթացակարգի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել

22.12.2016թ., որի արդյունքում դեռևս չունենք կնքված պայմանագիր սննդի մատակարարման համար, քանի որ գործընթացը կասեցվել է: Հարցի պարզաբանման համար Պատվիրատուն դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն և «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին:

Պատվիրատուն պատշաճ ծանուցված լինելով 23.02.2017թ. ժամը 16:00-ին նշանակված ԳԲԽ-24/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. ԳԲԽ-24/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲԽ-24/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի թիվ 12 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «12ՀԴՊ-ՇՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «ԷՔՍԻՏՈ» ՍՊԸ-ն և «Գալիմա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Կազմակերպություն):

2. Կազմակերպությունն Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է թվով 28 չափաբաժինների համար գնային առաջարկ, որի 1-ին սյունակում նշել է չափաբաժինների համարները, 2-րդ սյունակում՝ ապրանքի անվանումը, 3-րդ սյունակում՝ ինքնարժեք, 4-րդ սյունակում շահույթ, 5-րդ սյունակում՝ ԱԱՀ-ն, 6-րդ սյունակում՝ առաջարկվող ընդհանուր գինը տառերով և թվերով: Նշված գնային առաջարկով «Գալիմա» ՍՊԸ-ն հայտնել է, որ այս պահին չի հանդիսանում ավելացված արժեքի հարկ վճարող և հավաստում է, որ «Գալիմա» ՍՊԸ-ի կողմից սույն գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե կվճարվի ավելացված արժեքի հարկ:

3. «Երևանի թիվ 12 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ը 12.01.2017թ. թիվ 12/207 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել, որ Ընթացակարգին մասնակցելու

նպատակով «Գալիմա» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտի գնային առաջարկը չի համապատասխանել հրավերով սահմանված վավերապայմաններին, քանի որ գնային առաջարկի 5-րդ սյունակում ՀՀ պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը, համաձայն պահանջված ձևի, լրացվում է, եթե Ընկերությունը ԱԱՀ վճարող է:

Սակայն գնային առաջարկում Կազմակերպությունը նշել է, որ հանդիսանում է շրջանառության հարկ վճարող ընկերություն, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է «Գալիմա» ՍՊԸ-ի հայտը, ինչի վերաբերյալ Պատվիրատուն խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնել դիրքորոշում:

4. ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի պատասխան «Երևանի թիվ 12 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի 12.01.2017թ. թիվ 12/207 գրության, 03.02.2017թ. թիվ 03/73-3/1633-17 գրությամբ հայտնել է, որ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում նախատեսված են շրջանառության հարկի դադարեցման մի շարք հիմքեր, որոնց առկայության դեպքում նույնպես անձը դադարելու է համարվել շրջանառության հարկ վճարող և համարվելու է ԱԱՀ վճարող: Այսինքն, հայտը ներկայացնելու պահին հայտ ներկայացրած անձի շրջանառության հարկ վճարող համարվելու հանգամանքը դեռևս չի նշանկում, որ վերջինս գնման պայմանագիր կնքելուց հետո ամբողջ օրացուցային տարվա ընթացքում համարվելու է շրջանառության հարկ վճարող և ԱԱՀ-ի վճարման պարտավորություն չի կրելու:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ գրությամբ ներկայացված գնային առաջարկով «Գալիմա» ՍՊԸ-ն հավաստել է, որ տվյալ գործարքի գծով ՀՀ պետական բյուջե կվճարի ավելացված արժեքի հարկ, ուստի ՀՀ ֆինանսների նախարարությունը գտնում է, որ ներկայացված հայտը ենթակա չէ մերժման, իսկ հաղթող ճանաչվելու և պայմանագիր կնքվելու դեպքում պայմանագրում պետք է նշվի, որ պայմանագրի գումարը ներառում է նաև ԱԱՀ-ի գումարը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 10.02.2017թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 2-րդ կետով որոշում է կայացրել, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված պարզաբանումը, հայտ ներկայացրած բոլոր մասնակիցների գնային առաջարկների վերագնահատման արդյունքում «Գալիմա» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչել 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ,

7-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 19-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ, 29-րդ, 31-րդ, 49-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ, 53-րդ, 54-րդ, 58-րդ, 59-րդ չափաբաժինների մասով:

6. Կազմակերպությունը 27.02.2017թ. գրությամբ Կենտրոնին է ներկայացրել ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարության պատճենը, որի համաձայն՝ **«Գալիմա» ՍՊԸ-ն «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ կետի հիմքով համարվում է ԱԱՀ վճարող և կիրառելու է ԱԱՀ վճարողի հաշվառման համար 01.01.2017թ.-ից մինչև 31.12.2017թ. ներառյալ:**

7. Կազմակերպությունը ներկայացրել է իր հաշվառման վայրի հարկային մարմնի կողմից տրամադրված ավելացված արժեքի հարկ վճարող հաշվառելու մասին 17.01.2017թ. Հավաստագիր N 2-ը՝ համաձայն որի **«Գալիմա» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 00128415), 01.01.2017թ.- 31.12.2017թ. ներառյալ, հարկային մարմնում հաշվառված է ավելացված արժեքի հարկ վճարող և ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համար կիրառող:**

4. ԳԲԽ-24/17 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով ԷՔՍԻՏՈ՝ ՍՊԸ-ի 17.02.2017թ. բողոքը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, 23.02.2017թ. ի լրումն բողոքի, «Երևանի թիվ 12 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի 02.03.2017թ. թիվ 12/252 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, ՀՀ ֆինանսների նախարարության 03.02.2017թ. թիվ 03/73-3/1633-17 գրությունը, «Գալիմա» ՍՊԸ-ի 27.02.2017թ. գրությունը, ավելացված արժեքի հարկ վճարող հաշվառելու մասին 17.01.2017թ. Հավաստագիր N 2-ը, հայտնում է հետևյալը.

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ **ԱԱՀ վճարող է համարվում** որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող գրանցված կամ ձեռնարկատիրական գործունեություն

վարելու իրավունք ունեցող իրավաբանական անձը, օտարերկրյա կազմակերպության Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մասնաճյուղը (անկախ ոչ առևտրային կազմակերպություն հանդիսանալու հանգամանքից), նոտարը կամ անհատ ձեռնարկատերը՝ միասնական հայտարարությունում նշված օրվանից (բայց միասնական հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 30-րդ օրվանից ոչ շուտ) մինչև միասնական հայտարարությունում նշված տարվա ավարտը, **եթե շրջանառության հարկ վճարողն իր հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացրել է միասնական հայտարարություն (նշում կատարելով ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու մասին):**

«Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ **շրջանառության հարկ վճարողը դադարում է այդպիսին համարվելուց, եթե՝**

1) «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով սահմանված **ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ** Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած **հայտարարություն** (այսուհետ՝ միասնական հայտարարություն) **է ներկայացրել** իր հաշվառման վայրի հարկային մարմին (նշում կատարելով **ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու մասին**)՝ միասնական հայտարարությունում նշված օրվանից (բայց միասնական հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 30-րդ օրվանից ոչ շուտ) մինչև միասնական հայտարարությունում նշված տարվա ավարտը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 35-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: **եթե մասնակիցը փվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ**, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Այսպիսով, «Երևանի թիվ 12 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «12ՀԴՊ-ՇՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Գալիմա» ՍՊԸ-ն:

Կազմակերպությունն Ընթացակարգի թվով 28 չափաբաժինների համար ներկայացրած հայտի հավելված N 4 գնային առաջարկը ներկայացրել է «5-րդ սյունակում նշելով ԱԱՀ-ն, միաժամանակ նշելով, որ տվյալ պահին չի հանդիսանում ավելացված արժեքի հարկ վճարող և հավաստում է, որ «Գալիմա» ՍՊԸ-ի կողմից **սույն գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե կվճարվի ավելացված արժեքի հարկ:**

Համաձայն վերոհիշյալ հարց կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարության 03.02.2017թ. թիվ 03/73-3/1633-17 գրությամբ Պատվիրատուին տրամադրված պարզաբանման՝ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում նախատեսված են շրջանառության հարկի դադարեցման մի շարք հիմքեր, որոնց առկայության դեպքում նույնպես անձը դադարելու է համարվել շրջանառության հարկ վճարող և համարվելու է ԱԱՀ վճարող: Այսինքն, հայտը ներկայացնելու պահին հայտ ներկայացրած անձի շրջանառության հարկ վճարող համարվելու հանգամանքը դեռևս չի նշանակում, որ վերջինս գնման պայմանագիր կնքելուց հետո ամբողջ օրացուցային տարվա ընթացքում համարվելու է շրջանառության հարկ վճարող և ԱԱՀ-ի վճարման պարտավորություն չի կրելու: **Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ գրությամբ ներկայացված գնային առաջարկով «Գալիմա» ՍՊԸ-ն հավաստել է, որ տվյալ գործարքի գծով ՀՀ պետական բյուջե կվճարի ավելացված արժեքի հարկ, ուստի ՀՀ ֆինանսների նախարարությունը գտնում է, որ ներկայացված հայտը ենթակա չէ մերժման, իսկ հաղթող ճանաչվելու և պայմանագիր կնքվելու դեպքում պայմանագրում պետք է նշվի, որ պայմանագրի գումարը ներառում է նաև ԱԱՀ-ի գումարը:**

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 10.02.2017թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 2-րդ կետով որոշում է կայացրել թվով 25 չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Գալիմա» ՍՊԸ-ին:

Կազմակերպությունը 27.02.2017թ. գրությամբ Կենտրոնին է ներկայացրել ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարության պատճենը, որի համաձայն՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ կետի հիմքով համարվում է ԱԱՀ վճարող և կիրառելու է ԱԱՀ վճարողի հաշվառման համար 01.01.2017թ.-ից մինչև 31.12.2017թ. ներառյալ:

«Գալիմա» ՍՊԸ-ն ներկայացրել է նաև իր հաշվառման վայրի հարկային մարմնի կողմից տրամադրված ավելացված արժեքի հարկ վճարող՝ հաշվառելու մասին 17.01.2017թ. Հավաստագիր N 2-ը՝ համաձայն որի «Գալիմա» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 00128415) 01.01.2017թ.-31.12.2017թ. ներառյալ հարկային մարմնում հաշվառված է ավելացված արժեքի հարկ վճարող և ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համար կիրառող:

Այսպիսով, «Գալիմա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու պահին համարվել է շրջանառության հարկ վճարող, սակայն կրել է ԱԱՀ-ի վճարման պարտավորություն՝ նշելով, որ **սույն գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե կվճարվի ավելացված արժեքի հարկ**, ինչը նշանակում է, որ վերջինս գնման պայմանագիր կնքելուց հետո ամբողջ օրացուցային տարվա ընթացքում համարվելու է ԱԱՀ վճարող, ինչի պայմաններում, ըստ ՀՀ ֆինանսների նախարարության 03.02.2017թ. թիվ 03/73-3/1633-17 գրության, Ընկերության ներկայացված հայտը ենթակա չէ մերժման, իսկ հաղթող ճանաչվելու և պայմանագիր կնքվելու դեպքում պայմանագրում պետք է նշվի, որ պայմանագրի գումարը ներառում է նաև ԱԱՀ-ի գումարը:


Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կազմակերպությունը ներկայացրել է ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարության պատճենը, որի համաձայն՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ կետի հիմքով համարվում է ԱԱՀ վճարող, ինչպես նաև հարկային մարմնի կողմից տրամադրված ավելացված արժեքի հարկ վճարող հաշվառելու մասին 17.01.2017թ. Հավաստագիր N 2-ը՝ համաձայն որի «Գալիմա» ՍՊԸ-ն, 01.01.2017թ.-31.12.2017թ. ներառյալ, հարկային մարմնում հաշվառված է ավելացված արժեքի հարկ վճարող, Կենտրոնը գտնում է, որ Պատվիրատուն «Գալիմա» ՍՊԸ-ի հայտը գնահատելով բավարար՝ գործել է իրավաչափ, այն է՝ թույլ չի տվել Կարգի 35-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների

խախտում: ՀՀ ֆինանսների նախարարությունը վերը նշված գրությամբ հայտնել է նույն դիրքորոշումը:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը գտնում է, որ «ԷՔՍԻՏՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած բողոքն անհիմն է և առաջարկում ենք «ԷՔՍԻՏՈ» ՍՊԸ-ի 17.02.2017թ. ներկայացրած բողոքը մերժել:


«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Գնումների բողոքարկման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝



Հ. Ենգոյան

Գնումների վերապատրաստման և
խորհրդատվության բաժնի գլխավոր
մասնագետ՝ ԳԲԽ-24/17 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ա. Գրիգորյան